էմ կ'ուտին, զձիու գեամ բերնէն էխան, էթուղ մեանչ ձիանցտա-
րուն։ Քիւռիկ-Ջալալին զէն քեառսուն ձին էլ էտու յէռջիւ ա-
քիւցը, քեառսուն էլ էրաւ տիւս, զինք էն քեառսունը էմ կե-
րաւ։

Խանդիւթ խաթիւն լէ առից զԴաւիթ, կեացին տուն։

Տեսաւ՝ քեառսուն փէրիզ էնդեղ նստուկ ին. ինչ աչք կպաւ
Դաւթին, քեառսունի ձեռ ոտն էլ թիւլցաւ յախու։

Էնդեղ նստան խաց ուտիլ, գինի խմիլ։

Էնու մէկ ման կայ՝ էրկու կարաս կէս գինի կ'տանը, քեառ-
սուն զիտը էլ խաց էր տրի գինու խիտ։ Դաւիթն էր, նստաւ էն-
դեղ, էսաց.—Անուն Յիսուսին Քրիստուսին, անուն Աստուած, օխ-
նեցէք[1]) էսա խաց, նստինք, ուտինք։

Էսաց.—Մի միծ տիւ իս, բարի մէվան[2]), տիւ օխնը, յա-
ռաջն էլ տիւ կի։

Էսաց.—Իս օխնիմ, իս ուտիմ, տիւ սոված կ'մնէք։

Էսաց.—Տիւ օխնը, տիւ կի. որ մնաց, մինք կ'ուտինք. որ
չմնաց, չինք ուտը։

Դաւիթ կցից[3]) օխնիլ.—Հայ մեր, որ երկին, սուրբ եղեցի, ա-
նուն քո եկեցի, արքաւութին քո զեցի, կամ քու որպէս երկից ի
ւ'երկրից. զհաց միզ անապազ, զոր տուրտ միզ ասուր, թող զմի
պարտս միր, որպէս մի տանի միզի փորձըթընէ, ալ փրկեա զմիզ
ի չարէ, զի քու ի արքաւութին, զօրութին, փառք յաւիտեանս ա-
մէն։ Անուն Յիսուսին Քրիստուսին, անուն Աստըծուն Աստուած։—Էն
քեառսուն կռապաշտ ին, Աստըծու անուն չըն գիտը տայ։

Նստաւ, խաց կերաւ, իրանք բերան չ'տուին։ Դաւիթ էնա
քեառսուն զիտը խաց կերաւ, էրկու կարաս կէս գինին էլ մէկ
տեղ խմաւ։ Քեառսուն մարդ ուրինց թրիր չըփղեղցրցին[4]), տրին
սուփրի տակ. խօսքիր մէկ էրին, ասին.—Դաւիթ խմաւ, սարխոշ-
ցաւ[5]), քինի, զարկինք, սպանինք։

---

[1]) Օրհնեցէք։ [2]) Հիւր։ [3]) Սկսեց։ [4]) Մերկացրին։ [5]) Գինովցաւ։